

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/8

2 օգոստոսի 2016թ.

Քննարկվեց «Ջիվանյան ընդ սան» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 31.05.2016թ. թիվ 320595/01 որոշման դեմ:

«Ջիվանյան ընդ սան» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության կողմից 31.05.2016թ. կազմված վարչական իրավախախտման գործի արձանագրության՝ «Ջիվանյան ընդ սան» ՍՊԸ-ի տնօրեն Նուբար Ջիվանյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել հարկային մարմին 2016թ. 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը:

Գանգատաբերը գտնում է, որ կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը չի համատասխանում ՀՀ-ում գոծող օրենսդրության պահանջներին, քանի որ ընկերությունը 2014 թվականից հանդիսանում է բացառապես արտոնագրային վճար վճարող: Միևնույն ժամանակ, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի կիրառման որոշ հարցերի վերաբերյալ թիվ 25 պաշտոնական պարզաբանման 3-րդ մասի դրույթներով սահմանված է. «Այն անձինք, որոնք իրականացնում են բացառապես արտոնագրային վճարներով հարկվող գործունեություն հարկային մարմին ավելացված արժեքի հարկի հաշվարկներ, ինչպես նաև մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացնում»:

Ավելին, այդ մասին մի քանի անգամ դեռևս 2013թ. տեղեկացվել է Արաբկիր ՀՏ, որի գրության լուսապատճենը ևս ներկայացվում է: Հաշվի առնելով նշված հանգամանքը ընկերությունն ավելացված արժեքի հարկի հաշվարկներ չի ներկայացնում:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է վերանայել ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 31.05.2016թ. թիվ 320595/01 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 2414 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 20.05.2016թ. թիվ 2414 արձանագրությունը պարզել է, որ «Ջիվանյան ընդ սան» ՍՊԸ տնօրեն Նուբար Ջիվանյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2016թ. 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից

31.05.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 320595/01 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով Նուբար Զիվանյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «Զիվանյան ընդ սան» ՍՊԸ-ն 2014 թվականից հանդիսանում է բացառապես արտոնագրային վճար վճարող:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի կիրառման որոշ հարցերի վերաբերյալ թիվ 25 պաշտոնական պարզաբանման 3-րդ մասի դրույթներով սահմանված է. «Այն անձինք, որոնք իրականացնում են բացառապես արտոնագրային վճարներով հարկվող գործունեություն հարկային մարմին ավելացված արժեքի հարկի հաշվարկներ, ինչպես նաև մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացնում»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով նշված թիվ 25 պաշտոնական պարզաբանման 3-րդ մասի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 31.05.2016թ. թիվ 320595/01 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ